ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ

օգոստոսի 31, 2022թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
Առաջադրանքի անվանումը՝ Վերահսկող ինժեների (խորհրդատու)
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **AIC-19**
Վերջնաժամկետ՝ 2022թ. սեպտեմբերի 14-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Յուրաքանչյուր ենթածրագրի համար ՀՏԶՀ-ն նշանակում է ենթածրագրի պատասխանատու ինժեներ (ՊԻ), որը կընդգրկվի ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող ՍԱԲ Ծրագում՝ ենթածրագրի նախապատրաստման, և շինարարական աշխատանքների վերահսկման նպատակով:

Ծառայությունների շրջանակը

Խորհրդատու ինժեները պատասխանատվություն է կրում վերահսկելու շինարարության գործընթացը, այդ թվում՝ իրականացվող աշխատանքների համապատասխանությունը նախագծերին, շինարարության ընթացքում ծագած խնդիրների ուսումնասիրության, այդ խնդիրների մասին զեկուցելու և դրանց լուծման ուղիներ առաջարկելու: Նա նաև պատասխանատու է կատարված աշխատանքների ծավալների և որակի ստուգման համար:

Խորհրդատու վերահսկող ինժեների պարտականություններն են

- շինարարության ընթացքում շինհրապարակի այցելություն,
- իրականացվող շինմոնտաժային և վերանորոգման աշխատանքների համապատասխանության ապահովում տվյալ ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերին, ՀՏԶՀ-ի պահանջներին և ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերին ու կանոններին,
- կապալառու կազմակերպության կողմից աշխատանքային գրաֆիկի պահպանման վերահսկում
- կատարված շինարարական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերի հավաստիության ստուգում և վավերացում
- Ստուգիչ չափումների իրականացում
- ներկայացված կատարողական ակտերի իսկության ստուգում և վավերացում
- նախագծերի և աշխատանքների ծավալների փոփոխման վերաբերյալ առաջարկների պատրաստում
- Շին.աշխատանքների ավարտական ակտերի վավերացում
- Իրականացնում է Ծրագրերի իրականացման բաժնի պետի, Վերահսկման խմբի ղեկավարի հանձնարարությամբ այլ գործառույթներ

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի 1 տարի՝ երկարաձգման հնարավորությամբ:

Խորհրդատուի որակավորումը

- Շինարար-ճարտարագետի բարձրագույն կրթություն
- Շինարարության կազմակերպմա և/կամ կառավարման և/կամ վերահսկման բնագավառում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ
- Համակարգչային գիտելիքներ (MS OFFICE, Auto CAD)
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (ցանկալի է)

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV): Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Ասիական Զարգացման Բանկի «Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում» (մարտ, 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է) սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգին համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Ինքնակենսագրականները պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am և atdf@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2022թ. սեպտեմբերի 14-ը, ժամը 17:00**: Միայն կարճ ցուցակում ընդգրկված անձիք կհրավիրվեն հարցազրույցի:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: